ՔՐԻՍՏԻՆԵ ԽՈՐԵՆԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
kristinemelqumyan@litinst.sci.am
ORCID ID: 0000-0001-6099-7007
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-413

ԿԼԱՍԻՑԻՍՏԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ (18-ՐԴ ԴԱՐ)

Բանալի բառեր՝ *կլասիցիզմ, դասագիրք, ձեռնարկ, գեղագիտություն, Մխիթարյաններ, բանականություն, տեսություն:*

Ներածություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 18-րդ դարում դեռևս չկար կրթական ձևավորված միասնական համակարգ թե՛ բուն հայ իրականության մեջ, թե՛ նաև գաղթավայրերում, և նաև այն փաստը, որ հայկական տպագրությունը նոր էր մտնում կիրառական լայն հունի մեջ, անհրաժեշտ է որոշակի զգուշավորությամբ ու ինչ-որ առումով նաև պայմանականությամբ խոսել կրթական ծրագրերի, ինչպես նաև դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների մասին, համենայն դեպս, այդ հասկացությունների այն ըմբռնմամբ, որ գոյություն ուներ և կիրառական էր հետագա դարերում և առավել ևս՝ կիրառական է այսօր: Գրեթե յուրաքանչյուր վանական միաբանություն և հաստատություն ուսումնական բնույթի ձեռնարկներն ստեղծում կամ կազմում էր իր իսկ մշակած, իր միաբանության և տվյալ հաստատության նպատակներին ու թիրախներին համահունչ ծրագրերով: Ասվածը, ընդ որում, էլ ավելի խստականոնությամբ ու համակարգվածությամբ վերաբերում է նաև ու, թերևս, նախևառաջ Մխիթարյան միաբանությանը:

Այլ հարց է, սակայն, որ հատկապես միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին այդ խնդիրները դիտարկում էր առավել լայն կիրառականության հատույթում և հատկապես ուսումնական ձեռնարկներ կազմելիս նկատի էր ունենում ոչ միայն միաբանության սաներին և

միաբանության այսպես կոչված ներքին կանոնակարգը, այլև ժամանակի հայ ընթերցողին ու աշակերտին առհասարակ, որ վերջինս ևս դաստիարակվի, կրթվի ու լուսավորվի այդ ուսումնական ձեռնարկներով:

Մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ հայ գրատպությունը դեռևս լայն տարածում չուներ և կապված էր բազմաթիվ դժվարությունների հետ, թե՛ տպագրիչներին, թե՛ գիրք կազմողներին կամ հրատարակության պատրաստողներին մղում էր դրանք դիտարկել բազմագործառնականության մեջ և օժտել տարաբնույթ կիրառությունների համար անհրաժեշտ բովանդակային հատկանիշներով, այդ թվում՝ ու թերևս նախևառաջ՝ ուսումնական և կրթական: Այս առումով բացի բուն ուսումնական ձեռնարկներից և դասագրքերից, այդ հատույթում պետք է դիտարկել այս ժամանակաշրջանում ընդհանրապես հրատարակված գրքերի մեծամասնությունը՝ անկախ ծավալից և բովանդակությունից: Խոսքը վերաբերում է նաև Մխիթարյան միաբանությունում տպագրված գրքերին, համենայն դեպս նրանց, որոնք տպագրվել են մինչև 18-րդ դարի վերջին տասնամյակը: Այսպես՝ այդ առումով նույն գործառնականության շրջանակում են դիտարկելի, օրինակ, Խաչատուր Էրզրումեցու և՛ «Գիրք քերականութեան»-ը[1], որն իր բնույթով շատ մոտ է ուսումնական ձեռնարկին, և՛ «Համառոտական իմաստասիրութիւն»-ը[2], որը չափածո շարադրված մեծածավալ ու բազմաբովանդակ մի աշխատություն է: Այսպիսի մոտեցումը, բնականաբար, փոքր-ինչ բարդացնում է Մխիթարյանների գործունեությունը հենց կրթական հատույթում ուսումնասիրողի գործը, առավել ևս՝ հաշվի առնելով տպագրված գրքերի երբեմն ահռելի ծավալներն ու մանվածապատ, երբեմն ուղղակի անհասկանալի գրաբարը: Սակայն երևույթը կա, և այդ փաստը առնվազն պետք է արձանագրել:

Կլասիցիզմի տեսությունն իբրև հիմնարար մոտեցում

Ըստ ամենայնի՝ Մխիթարյան միաբանության ձևավորումն ու միաբանության սկզբնավորած գրական, գեղագիտական, թարգմանական, քերականական, պատմագիտական, մատենագիտական, կրթական, ու, ընդհանրապես, մշակութային հսկայական շարժումը համըն-

---

[1] **Խաչատուր Էրզրումեցի,** Գիրք քերականութեան, Լիվոռնո, 1696:

[2] Տե՛ս **Խաչատուր Էրզրումեցի,** Համառոտական Իմաստասիրութիւն: Հատ. 1–2: Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1711:

կավ Եվրոպայում կլասիցիզմի ձևավորման ու կայացման ընթացքի հետ: Ուստի ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ կլասիցիզմի գեղագիտությունը ի սկզբանե գերիշխում է Մխիթարյանների մշակութային-գրական գրեթե բոլոր ձեռնարկներում, և դա, բնականաբար, իր արտահայտությունն է գտել ոչ միայն տեսաբանության մեջ, այլև գործնական կիրառություններում, այդ թվում՝ դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում:

Թեպետ գրականագետ Մարատ Թադևոսյանը գրում է, թե «Հայ կլասիցիստական պոեզիայի ու տեսության սկզբնավորումը նշանավորվեց համարյա միաժամանակ»[3], այդուհանդերձ, կարծում ենք, որ տեսությունն ավելի առաջ էր՝ հաշվի առնելով թեկուզ այն փաստը, որ գլխավոր տեսաբաններից Խաչատուր Էրզրումեցին իր աշխատությունների վրա բավական երկար է աշխատել մինչ հրատարակելը: Սա հատկանշական փաստ է այն առումով, որ Մխիթարյանների գործունեությունն ընդհանրապես, ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի ստեղծումը մասնավորապես պայմանավորված են այդ տեսության թելադրած գեղագիտական սկզբունքներով:

Թերևս պետք է նախևառաջ ընդհանրացնելով նշել կլասիցիզմի կարևորագույն ու առաջնային հասկացություններից մեկին՝ գեղեցիկին՝ իր ամբողջական ընդգրկմամբ հետևելու և այդ ընդգրկումը հետևողականորեն պահպանելու Մխիթարյանների սկզբունքը: Եթե «Կլասիցիզմի տեսաբանները գեղեցիկի կարևոր հատկանիշներն էին համարում խստագույն կարգավորությունը, հստակությունը, համամասնությունը, ներդաշնակությունը, միասնությունը, անտիկ արվեստի օրինակներին ուղղակի կամ անուղղակի համապատասխանությունը»[4], ապա կարող ենք փաստել, որ Մխիթարյանների և՛ գործունեությունն իր էությամբ ու ընդգրկումներով, և՛ այդ գործունեության գրական-մշակութային-գիտական նյութականացումը հենց այդ ընդգրկուն գեղեցիկի իրացումն են:

Կլասիցիզմի գեղագիտության կոնկրետ դրսևորումները

Հայկական կլասիցիզմի տեսության երկու կարևորագույն աշխատությունները՝ Խաչատուր Էրզրումեցու «Համառոտական իմաստասի-

---

[3] **Թադևոսյան Մ.,** Հայկական կլասիցիզմի տեսությունը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 21:
[4] Նույն տեղում, էջ 18:

րութիւն» և Ստեփանոս Ագոնցի «Ճարտասանութիւն բովանդակեալ ի հինգ գիրս»[5], իրենց բազմաթիվ հատկանիշներով դիտարկելի են ուսումնական ձեռնարկների հատույթում: Մյուս կողմից՝ ըստ ամենայնի հենց այդ աշխատություններ են տարբեր ժամանակահատվածներում իբրև տեսական հենք ծառայել Մխիթարյանների թե՛ գրական-գեղարվեստական, թե՛ կրթական, թե՛ գիտական ամենատարբեր ձեռնարկների ու իրացումների համար: Այդ հիմնարար աշխատություններին գրականագիտությունը մանրամասն անդրադարձել և արժևորել է ըստ հարկի[6]: Ուստի կլասիցիստական գեղագիտության դրսևորման տեսանկյունից դիտարկենք բուն գործառնական առումով մի քանի ուսումնական ձեռնարկներ և դասագրքեր:

Նախևառաջ ընդգծելի է Մխիթար Սեբաստացու դասագրքաստեղծ գործունեությունը, առավել ևս, որ այդ ժամանակաշրջանում հայկական դպրոցներում դասավանդվող երկու գլխավոր առարկաների՝ հայոց լեզվի և կրոնի դասագրքերի հրատարակությունները 18-րդ դարում կապվում են հենց նրա անվան հետ:

Առաջին հայացքից թվում է՝ Մխիթար Սեբաստացին հատկապես իր ստեղծած առաջին դասագրքերում հետևում է հայ իրականության նախընթաց փորձին ու ավանդույթներին: Հարցն այն է, որ դեռևս 17-րդ դարում ձևավորված ավանդույթով լեզվի և կրոնի դասագրքերը հրատարակվում էին մի գրքում, որտեղ ընթերցանության ուսուցմանը հաջորդում էր քրիստոնեական վարդապետության ուսուցումը: Այս սկզբունքով են ստեղծվել Ամստերդամի հայկական տպարանի ուսումնական բնույթի հրատարակությունները: 1662 թ. Կարապետ Անդրիանացին տպագրում է 72 էջանոց մի գրքույկ, որի առաջին մասը համառոտ Այբբենարան էր, իսկ երկրորդ մասը քրիստոնեության գլխավոր հասկացությունների բացատրությունը[7]: Համանման ձևով 1666 թ. Ոսկան վարդապետ Երևանցին է մի գրքում տպագրում «Այբբենարան եւ քրիս-

---

[5] **Ստեփանոս Ագոնց,** Ճարտասանութիւն բովանդակեալ ի հինգ գիրս, Վենետիկ, 1775:

[6] Տե՛ս, օրինակ, **Թադևոսյան Մ.,** Հայկական կլասիցիզմի տեսությունը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 23–36, 48–54, **Լաճիկեան Լ.,** Խաչատուր Էրզրումեցին եւ Հայկական կլասիցիզմի գեղագիտութիւնը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2001, թիւ 1–12, յունուար-դեկտեմբեր, էջ 73–96:

[7] Տե՛ս Այբբենարան, Ամստերդամ, տպարան Ս. էջմիածնի և Ս. Սարգսի, 1662:

տոնէական»[8]: Թե՛ Անդրիանացու և թե՛ Ոսկան վարդապետի հրատարակությունների սկզբում զետեղված են «Այբբենարան» անվանվող ընթերցանության կանոնները, ապա հաջորդում է համառոտ «Քրիստոնեականը»:

Մխիթար Սեբաստացին ևս կարծես հետևում է այս սկզբունքին՝ 1725 թվականին հրատարակելով «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, ընդ որում և Այբբենարան»[9]: Սակայն ծավալային հսկայական տարբերությունը արդեն երևան է բերում կլասիցիզմի գեղագիտությանը բնորոշ հիմնավորության և ամբողջականության սկզբունքի կիրառումը: Նմանաբնույթ նախորդ գրքերի ծավալը 60–70 էջ էր, իսկ ահա Մխիթար Սեբաստացու դասագրքի միայն առաջին մասը, որն արդեն ոչ թե ընթերցանության, այլ քերականության ձեռնարկ է, բաղկացած է 73 էջից, իսկ ամբողջ գիրքը 312 էջ է:

Մյուս կողմից՝ չնայած ծավալի անհամեմատ ընդլայնմանը և քրիստոնեության հիմնական հասկացությունները ավելի խոր, հիմնավոր ու ամբողջական ներկայացնելուն՝ Մխիթար Սեբաստացու համար առաջնայինը նյութի պարզ և մատչելի մատուցումն է: Այս առաջնայնությունը նույնպես կլասիցիստական գեղագիտության իրացում է, որքան էլ խորքում ունի ավելի հին արմատներ: Հարցն այն է, որ կլասիցիզմի տեսաբանները բանականության սկզբունքներին հետևելու պահանջով, որ գեղագիտական հիմնական դրույթներից է, հիմնավորում ու պահանջում էին համամասնության, ներդաշնակության, հստակության և, որ ամենակարևորն է, պարզության սկզբունքները: Նյութի թե՛ բովանդակային ընդգրկման, թե՛ մատուցման տեսանկյունից Մխիթար Սեբաստացու դասագիրքը բավարարում է այդ սկզբունքները[10]:

Գրքի առաջաբանում Մխիթար Սեբաստացին բացատրում է, թե քրիստոնեական վարդապետության ուսուցումը ինչու է սկսել Այբբենա-

---

[8] Տե՛ս Այբբենարան եւ քրիստոնէական, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668:

[9] Տե՛ս **Մխիթար Սեբաստացի,** Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան ընդ որում դնի և այբբենարան, ի յուսումն մանկանց հաւատացելոց, և ամենից որք ունին զպիտոյս: Շարադրեցեալ աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ Վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ, Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1725:

[10] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ղևոնդյան Մ.,** Մխիթար Սեբաստացու «Քրիստոնէականներ»-ը որպես կրթադաստիարակչական դասագրքի նմուշ, «Բանբեր Մատենադարանի», թիվ 32, Ե., 2021, էջ 158–170:

ռանով. «Զի զԱյբբենարանն դիցուք ի սկզբան սորին, որպէսզի մանկունքն յետ ուսման այբ և բենից, և հեգից վանկից, և բառից, ի տեղի հենգ սաղմոսի սկսանիցին ուսանիլ զքրիստոնէական վարդապետութիւն»[11]:

1737 թվականին Մխիթար Սեբաստացին տպագրում է վարդապետության դպրոցական խաղային տարբերակը[12]: Այս հրատարակության բնույթն ինքնին ուշագրավ է: Հարցն այն է, որ կլասիցիզմի գեղագիտությամբ ներշնչված՝ Մխիթար Սեբաստացին այստեղ կիրառում է հայ իրականության համար մանկավարժական անսովոր մեթոդ՝ որպես դիդակտիկ տպավորիչ միջոց կիրառելով լոտոյի խաղը 40x49 չափով թղթե քարտի վրա: Այն ուներ 46նկարազարդ քառակուսի, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում էր քրիստոնեության որևէ հասկացության:

Լոտոյի քարտի հետ միաժամանակ տպագրում է այս խաղի կանոնները բացատրող գրքույկ, որն ուներ «Քրիստոնէական վարդապետութիւն որ ի գործ ած ի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալոյ» խորագիրը: Վերնագրում հստակ ասվում է, որ այն խաղի բացատրությունն է: Հիշյալ խաղի բացատրությունը ներկայացնող առաջաբանը ունի հետևյալ խորագիրը. «Խրատ առ կերպն խաղալոյ զխաղս զայս հոգեւոր»: Խաղը զառով է: Յուրահատկությունն այն, որ խաղում պարտվելը վերածվում է հոգևոր շահումի, քանի որ լոտոյի խաղաքարտերը տանուլ տալիս պետք է ասվեր Գաբրիել հրեշտակապետի Տիրամորն ուղղված «Ողջոյն»-ը կամ «Հայր Մերը»: Վարդան Դևրիկյանը լոտոյի գրքի վերջում եղած հրահանգների մասին գրում է. «Պատկերների բացատրության վերջում, որպես խորհուրդ խաղի կազմակերպիչներին, ասվում է, որ երբ խաղացողները զառի ցույց տված համարի այս կամ այն պատկերին են հասնում, վերջինիս հոգևոր խորհուրդը խորությամբ ընկալեն և միայն որպես խաղի ու զվարճության չվերաբերվեն, այլ փորձեն ընկալել և հիշել յուրաքանչյուրի պարունակած հոգևոր խորհուրդը»[13]:

---

[11] Նույն տեղում, էջ 6:

[12] Տե՛ս **Մխիթար Սեբաստացի**, Քրիստոնէական վարդապետութիւն որ ի գործածի ի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալոյ, Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1737:

[13] **Դևրիկյան Վ.,** Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Գ, Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին, Եր., «Զանգակ» հրատ., 2016, էջ 134–135:

Նման մոտեցումներով են գրված Մխիթար Սեբաստացու՝ աշխարհաբարի և գրաբարի քերականություններին նվիրված ուսումնասիրությունները՝ այդ կերպ կլասիցիզմի գեղագիտությունն իրացնելով ոչ միայն բովանդակային, այլև կառուցվածքային հարթություններում՝ փորձելով լուծել առավելագույն խնդիրներ: 1730 թվականին Մխիթար Սեբաստացու տպագրած «Քերականութիւն գրաբառի լեզուի» 548 էջանոց ծավալուն գիրքը[14] գրված է հայ միջնադարյան ու նոր շրջանի եվրոպական քերականական աշխատությունների համադրմամբ: Այն իրապես հետազոտական աշխատանք է, ուր համակողմանիորեն քննվել են գրաբարի հնչյունաբանությունը, ձևաբանությունը և շարահյուսությունը, մյուս կողմից՝ Մխիթար Սեբաստացին իր առջև խնդիր է դնում ներկայացնել ոչ միայն գրաբարի քերականությունը, այլև ժամանակի գրավոր խոսքը ազատել լատինաբան աղճատումներից: Սեբաստացու նմանատիպ ձեռնարկները տարբեր նպատակադրումներից զատ՝ նախևառաջ հայկական կլասիցիզմի ընդգրկումների ու գեղագիտության ծիրում են: Ընդհանրապես, 18-րդ դարի 20–40-ական թվականներին լեզվա-ոճական խնդիրները հայ կլասիցիստների ուշադրության կենտրոնում էին, ինչը, ինչպես գրում է Մարատ Թադևոսյանը, «բացատրվում է ժամանակաշրջանի ինչպես հասարակական, այնպես էլ գրական պահանջներով»[15]: «Լեզվական միասնության հասնելու ձգտումը,– կարդում ենք շարունակության մեջ,– լինելով ժամանակաշրջանի հայ իրականության պատմա-մշակութային մտայնություն, դառնում է արդեն գեղագիտական ձգտում՝ հաստատել միասնական գրական լեզու, գրականության մեջ պայքարել լեզվական ազատությունների դեմ»[16]: Այս ամենը, անշուշտ, բխում է պարզության ու հստակության կլասիցիստական պահանջներից:

Հայտնի է, որ «Կլասիցիստական տեսության մյուս բնորոշ գիծը անտիկ արվեստի պաշտամունքն է»[17]: Մխիթարյան միաբանության ուսումնական ձեռնարկներում այն արտահայտվում է տարբեր եղանակ-

---

[14] Տե՛ս **Մխիթար Սեբաստացի,** Քերականութիւն գրաբառի լեզուի, Վենետիկ, տպարան Բատիստա Ալբրիցի Ջերոլիմոյի, 1730:

[15] **Թադևոսյան Մ.,** Հայկական կլասիցիզմի տեսությունը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 36:

[16] Նույն տեղում, էջ 38:

[17] Նույն տեղում, էջ 19:

ներով: Մի կողմից՝ անտիկ հեղինակներից հնարավորինս մեջբերումներով՝ որպես ճաշակի, արվեստի ու վարպետության ցուցիչ, մյուս կողմից՝ քանի որ հայ իրականության մեջ չկա դասական անտիկ, ապա Մխիթարյանները իբրև անտիկ գրականության համարժեք բերում են հայ դասական մատենագրության ընտիր հատվածները՝ նույն նպատակադրումներով: Այս կերպ փորձ էր արվում անցյալի գրական ավանդների վերակենդանացման, որն ուներ նաև գեղագիտական նպատակներ, այն է՝ «դասական հեղինակների գեղագիտական ըմբռնումներով ու ճաշակով հիմնավորել գրական օրենքներն ու սկզբունքները, սահմանել գեղագիտական դրույթներ»[18]:

Կրոնական և հայագիտական առարկաներից բացի Մխիթարյանները դասավանդում էին նաև բնագիտական առարկաներ: Ուստի, կրոնա-հայագիտական առարկաների համար անհրաժեշտ ձեռնարկների կազմությունից և հրատարակությունից հետո նրանք ձեռնամուխ են լինում նաև բնագիտական առարկաների՝ մաթեմատիկա, երկրաչափություն, աշխարհագրություն և այլնի համար դասագրքերի ստեղծմանը[19]: Դրանց մանրամասն անդրադարձը թողնելով մեկ այլ առիթի՝ նշենք, որ այդ դասագրքերը նույնպես իրենց նպատակադրումներով ու մեթոդաբանությամբ կլասիցիզմի գեղագիտության ծիրում են:

Ամենակարևորը՝ դրանք հստակ, պարզ ու հիմնավոր գիտելիքներ մատուցելուց զատ՝ զարգացնում են ճաշակ՝ հասկացողություն, որը նույնպես չափազանց կարևոր դեր ունի կլասիցիստական գեղագիտության մեջ:

Եզրակացություններ

Կլասիցիզմի գեղագիտությունը Մխիթարյանների մշակութային-գրական գրեթե բոլոր ձեռնարկների հենքում է, և դա, բնականաբար, իր արտահայտությունն է գտել ոչ միայն տեսաբանության մեջ, այլև գործնական կիրառություններում, այդ թվում՝ դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում: Խոսքը վերաբերում է հատկապես 18-րդ դարում իրականացված հրատարակություններին և, մասնավորապես,

---

[18] Նույն տեղում, էջ 65:

[19] Այդ դասագրքերի մասին տե՛ս **Փաշայեան Ա.,** Մխիթարեանների բնագիտական հրատարակութիւնները ԺԸ–ԺԹ դարերում, «Բազմավէպ», Վենետիկ, 2001, թիւ 1–4, էջ 333–350:

Մխիթար Սեբաստացու ստեղծած դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին: Դրանցում նախ՝ պետք է ընդգծել կլասիցիզմի կարևորագույն ու առաջնային հասկացություններից մեկին՝ գեղեցիկին՝ իր ամբողջական ընդգրկմամբ հետևելու և այդ ընդգրկումը հետևողականորեն պահպանելու սկզբունքը, այնուհետև կլասիցիզմի գեղագիտությանը բնորոշ հիմնավորության և ամբողջականության սկզբունքի կիրառումը: Նյութի պարզ և մատչելի մատուցմանն առաջնայնությունը տալը նույնպես կլասիցիստական գեղագիտության իրացում է: Հատուկ պետք է ընդգծել ճաշակ զարգացնելու Մխիթարյանների նպատակադրումը, ինչը նույնպես չափազանց կարևոր դեր ունի կլասիցիստական գեղագիտության մեջ:

КРИСТИНЕ МЕЛКУМЯН

Младший научный сотрудник Института литературы имени М. Абегяна НАН РА

ПРОЯВЛЕНИЯ ЭСТЕТИКИ КЛАССИЦИЗМА В УЧЕБНИКАХ МХИТАРИСТОВ (XVIII ВЕК)

Резюме

Формирование Конгрегации Мхитаристов и начало их литературного, эстетического, переводческого, грамматического, исторического, библиографического, просветительского и вообще огромного культурного движения совпало с образованием и становлением классицизма в Европе. В статье особое внимание уделяется изданиям, печатавшимся в XVIII веке, в частности, учебникам и пособиям, созданным Мхитаром Себастаци. Здесь мы прежде всего особо выделили и проанализировали принцип следования одному из важнейших и основных понятий классицизма – «красоте» в его наиболее полном смысле и последовательному следованию этому принципу. Также подчеркивается применение в учебниках принципа обоснованности и целостности как важнейшей характерной черты эстетики классицизма. Особо рассматривается принцип Мхитаристов о приоритете простого и доступного изложения материала, который также

является одной из проявлений эстетики классицизма. Особо внимание уделено цели Мхитаристов прививать и развивать вкус, которая также играла чрезвычайно важную роль в классицистической эстетике.

Ключевые слова: *классицизм, учебник, пособие, полиграфия, эстетика, Мхитаристы, красота, разум, теория.*

KRISTINE MELKUMYAN
Junior researcher of the NAS RA
Institute of Literature after M. Abegyan

THE MANIFESTATIONS OF CLASSIC AESTHETICS IN THE TEXTBOOKS OF THE MKHITARISTS (18TH CENTURY)

Abstract

The formation of the Mkhitarist Congregation and their initiation of the literary, aesthetic, interpretive, grammatical, historical, bibliographic, educational, and, in general, huge cultural movement coincided with the formation and establishment of the classicism in Europe. The article especially refers to the publications printed in the 18th century, particularly to the textbooks and manuals created by Mkhitar Sebastatsi. Here we first of all highly emphasized and analyzed the principle of following one of the most important and primary concepts of the classicism, that is “the beautiful”, with its full inclusion and the principle of consistently maintaining that inclusion. The application of the principle of validity and integrity in textbooks as the characteristic feature of classicistic aesthetics has been vitalized and highlighted as well. The Mkhitarists’ principle of prioritizing the simple and accessible presentation of the material, which is also a realization of classicistic aesthetics, has been particularly studied. The aim of the Mkhitarists to develop taste was especially underlined, which also had an extremely.

Keywords: *classicism, textbook, manual, printing, aesthetics, Mkhitarists, beautiful, intellect, theory.*